

ԾՕՎԱՐ

ԱԵԼՔԱՐ

Զարարելու
Զրին Կիւ

ՉԵԳՈՒՂ



Ի. Տարի, Թիւ 7. Յուլիս 1, 1929

ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԿՇՈՅ ԾՕՎԱՐ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 1326 W. Huron St., Chicago, Ill.

ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ ԸՌԹԻԻ

Զնգչոյ Վերջ. Միութեան վեցերորդ Պատգ. Ժողովը պիտի գումարուի Յուլիս 6 եւ 7 օրերուն, ինչ երեքի մէջ:

Միութեան Գերագոյն Ժողովը համարաւորութեան պիտի կանչէ Կեղը. Վարչութիւնը, պիտի թէ մասնաճիւղերու տեղեկագիրները եւ զանազան հարցերու շուրջ խորհրդածելէ, իր ոյժն ու վերը գնահատանքի ենթարկելէ յետոյ, պիտի գծէ յաջորդ տարուան գործունէութեան ուղղեցիքը եւ ընտրէ նոր Կեղը. Վարչութիւնը:

Յետադարձ ակնարկ մը Միութեան անցեալ 11 տարիներու գործունէութեան վրայ, յայտնի պիտի ընծայէ որ թէեւ շատ խօսուած բայց քիչ գործ տեսնուած է ամենուրեք: Ուշագիւր վերլուծումով մը պիտի տեսնուի որ ոյժերը վատնուած են անտուելապէս պաշտպանողական դիրքերու վրայ չարունակուած աշխատանքներու մէջ, եւ այս ու այն կողմ տատանումներն ու սայթաքումները արդիւրեւ եւ չարքերը խտացեալ պահելու համար:

Միտքերը յստակ եւ անտարբերները հետաքրքիր պահելու համար սպասած են կազմակերպական ոյժերը: Մաքրագործումը, սէգերու աշխուրդը աւելի կորով պահանջած է, աւելի ճիգ, քան կազմակերպեալ եւ արդիւնաւոր գործունէութիւնն ու զբաղմունքները մշակումը:

Ասիկա ալ, սակայն, թէեւ բացասական գործունէութիւն, եղած է պարտադրական աշխատանք մը վարիչ մարմնոյն համար, եւ հարկ է ըսել թէ

ունեցած է իր սրուղ դերը եւ օգուտը՝ հարթելով ապագայ գործունէութեան ճամբաները:

Այս իրողութիւնները ի մտի ունենալով, մեր անկեղծ թերադրութիւնը պիտի ըլլայ, որ Պատգ. Ժողովը քննադատութիւններով ջուր ծեծելէ աւելի լըծօրէն վեր առնէ հարցերը, գնահատէ արժէքները, շեշտակի նայի թերութիւններուն եւ ապագայ փայլուն հետանկարներ հետապնդող կազմակերպութեան մը նման մշակէ իր վաղուան գործունէութեան ծրագիրը:

Քննադատութիւնները պէտք է ըլլան՝ այո՛, եւ ըլլան դանակի պէս հատու, այսու հանդերձ միայն քննադատութիւններու ապաւինելով թիւաբեկ մակոյկը՝ կը նշանակէ անդունդներու եզերքները դեգերիլ եւ ալեկոծ ջուրերու վրայ նաւարկել ընդերկար: Քննադատանք, բայց նոյն ատեն ցոյց տանք ուղիւն ուրիշ պէտք է քալել, մատնանշենք լոյսը՝ որուն պէտք է նայիլ՝ Միութեան գործերը լաւագոյնս վարելու եւ անոր վսեմ նպատակը իրագործելու համար:

Վստահ ենք թէ մեր պատգամաւոր հայրենակիցները երբ կը վիճին, կը խորհրդածեն ու կը ծրագրեն, միմիայն Միութեան յառաջդիմութիւնը, զօրացումը եւ անոր ձգտումներուն իրագործումը պիտի ունենան իրենց առաջնորդ եւ ներշնչում:

Սրտագինս յաջողութիւն կը մաղթենք Զնգչոյ Վերջ. Միութեան Վեցերորդ Պատգ. Ժողովի աշխատութեանց:

ԱՆՀԱՏԸ ԻՐ ԱՐԺԱՆԻՔՈՎ

Մեր ծննդավայրին մէջ, ուր ամէն մարդ զիրար կը ծանօնար, դիտէր մեծ ու պղտիկը եւ իրարու հանդէպ փոխադարձ յարգանք կը տածէր: Թէ ասոր զիտակցութիւնը ունէի՞նք մեր պապերը, չենք գիտեր, այսու հանդերձ զայնքի առաքինութիւն մըն էր անիկա:

Դժբախտաբար այսօր անցեալի այդ առաքինութեան ճիշտ հակադասակերպ կը տեսնենք, հակառակ որ նոյն տեղի սովորութիւններով, վարքով ու բարքով մեծցած մարդիկն ենք եւ կամ նոյն ժողովուրդի գաւազները:

Ոչ յարգանք կայ այսօր եւ ոչ ալ ակնածանք. մեծամոլութիւնը աւելի արմատացած է եւ ամէն մարդ իր ուղածին պէս կը չափէ ու կը ձեռէ եւ միայն իր բրածը չիտակ կը պաւանդի:

Այսպէս՝ մէկը կը խորհի թէ քանի որ ինքը անցեալին մէջ յարգուած է կամ հարուստի գաւազ եղած է, պէտք է այսօր ալ յարգուի, առանց նկատելու իր արժանիքը, եւ իր այդ վիճակին մէջ կ'արհամարհէ իրեն ծանօթ համեստ արհեստատիրին գաւազը, որովհետեւ անցեալով կ'ապագայը եղած է կամ կ'օգտի նորոգող:

Ուրիշ մըն ալ կը խորհի թէ մարդու մը մեծութիւնը հարուստ ըլլալուն մէջ է, եւ քանի որ այսօր ինք դրամ ունի, հետեւաբար ինքն է միայն յարգանքի արժանի անձը, առանց հարցնելու ինքն իրեն թէ ի՞նչ լաւ գործ բրած է հանդէպ իր նմաններուն:

Այս երկու մտածելակերպերն ալ սխալ են: Եթէ հարուստին գաւազը կ'ուզէ յարգուիլ, պէտք է իր անցեալին համապատասխանող ընթացքի մը հետեւի, որովհետեւ իր հօրը պատիւը իրեն համար օգուտ մը չունի, շատ շատ զինքը ճանչցողներ «Մե՛ղք ծնողացդ որ անոնց գաւազն է» պիտի ըսեն ու արգահատին:

Իսկ ան որ քանի մը տղար ունի այսօր՝ երբեք հպարտանալու չէ, որովհետեւ դրամը չէ որ մարդը յարգանքի արժանի կ'ընէ, հապա գործը:

Ներկան՝ ծնողքին լաւ կամ գէշ յատկութիւնովը չի գտնուող անհատը եւ ոչ ալ հարուստ կամ աղքատ կը ճանչնայ. հետեւաբար եթէ անցեալով լաւ մէկու մը գաւազն է, նայէ որ աւելի համեստ ըլլաս, եւ եթէ անցեալին աղքատ էիր եւ այսօր հարստութեան բարիքը կը վայելես, նայէ որ նորէն համեստ ըլլաս եւ քու հարստութենէդ բաժին հանես քու աղքիդ ու նմաններուդ, քանզի քու լաւ գործովդ է որ յարգանքի արժանի պիտի ըլլաս եւ ոչ թէ անցեալովդ: Այսօր անհատը իր արժանիքով կը ճանչցուի ու կը յարգուի:

ԾՕՎԱՌՅԻ

ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Կեդր. Վարչութեան կողմէ մեզի զրկուած չըջարեալանէն կը տեղեկանանք որ Չնդչոյ Վերաչինաց Միութեան Վեցերորդ Պատգ. Ժողովը պիտի գումարուի Յուլիս 6, Շաբաթ կէսօրէ վերջ եւ Կիրակի ամբողջ օրը: Վայրն է Լէյալը Լայ-սիւրմ Զօյր, Թայլըր Փլէյս եւ 17րդ փողոց, Ուէսթ Նիւ Եորք, Նիւ Ճորջի: Մասնաճիւղերու պատգամաւորներէն կը խնդրուի ճիշտ ժամանակին ներկայ ըլլալ:

ՆՈՒԷՐ «ԾՕՎԱՌ»Ի

Շնորհակալութեամբ ստացած ենք Յ. Դոնտեանի 5 տղարի նուէրը: ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԱՆՏԷՐ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐ

Հայ նահատակներու յիշատակին նուիրուած օրը՝ Մարտի 24-ին, Հայ Թերթեր Հրատարակչին յուզիչ եւ պաշտօնական գրութիւններ, որոնցմով ընթերցողներու ունէն երեւակայութիւնը տարին տասնեւհինգ տարի ետ, երբ պիտի չեն իրենց սիրելիները:

Հայ մեռելներու օրուան առթած ախուր տղաւորութեանը տակ տակաւին՝ Մայիս 30-ին՝ Մեռելոցի օրը, ինչպէս նախկինով լինէր ունեցայ գերեզմանատուն երթալ՝ յարգելու համար մեռելներու խնկի յիշատակը:

Մէկ ժամ յետոյ Մատեն Թիւրք գերեզմանատան նախապնէն ներս կը մտնեմ: Թէ յատկապէս ո՞ր մէկ ննջեալի համար հոս եկած եմ, չեմ կրնար բացի: Փառահեղ գերեզմանատուն մը այցելել ալ չէր նպատակս, եւ արդէն ալ մէկը բաղդատաբար աւելի անշուք է եւ հրապուրիչ ոչ ունի: Ինչպէս ուրիշ գերեզմանատան մէջ՝ հոս ալ շուրջ մօտիկ ազգական մը կամ սիրելի մեռեալ մը, բայց կարենք ինչ ոյժ մը, որ զիս բերած էր Մատեն Թիւրք: Այս ներքին ոյժը կարելի է բացատրել արեւակցական կամ հայրենակցական սիրով, որ բոյն դրած է մեր խորհուրդներուն մէջ եւ որ զիս խթանած էր այցելելու Մատեն Թիւրք գերեզմանատան մէջ յախտնորէն ներսու 10—15 Զնդուցիներու գերեզմաններուն:

Գերեզմանատան երկրորդ անցքէն ներս՝ պլաթ 15-ին վրայ կը դառնան մեր ինքներու գերեզմանները, խստուած օտար գերեզմաններու հետ: Կ'այցելեմ բոլորին ալ: Ոմանց վրայ ցանցնուած ծաղիկները, մասնաւոր հողատարութիւնն ու յարգարանքը կ'աղաքցուցանեն թէ անոնք ստացած են շէնքակոյի մէջ աղբոյ իրենց բարեկամներուն այցելութիւնը իսկ կան գերեզմաններ այ որոնք բոլորովին անխնամ թողուած՝ խոտերու մէջ ծածկուած են եւ հազիւ նշմարելի իրենց ինքնութիւնը ճշդող թիւր:

Այս անտէր մեռելներու յիշատակը թարմացնելու համար, քիչ մը Զուր կը ցանցնեմ գերեզմաններուն վրայ եւ օղակ կը հետանամ Մատեն Թիւրքի մէջ յաւէտ ննջող 10—15 Զնդուցի հայրենակիցներու անշուք չիրմներէն՝ անթափ նահատակներու յիշատակը սգալով հօգիտ խորեղի:

Մայիս 30, 1929

Շիքալի

ՍԵԻՔ

ԳՆԱՀԱՏԱՆՔ

Յարգելի Վարչութիւն «Ծօլառ»ի,

«Ծօլառ»ի բրած գոհուրթիւնները մեզ Զնդուցիներու համար եւ կատարած գերը արժանի են ամէն գովանքի: Ան ամէն ամիս կ'այցելէ մեզի՝ բնոյնաւորուած բարեւոյ աշխարհի շորս կողմը ցրուած Զնդուցիներու մասին Ասիկա մեծ գործ է որ կը կատարէ «Ծօլառ» եւ մեզի ցոյց կուտայ յառաջդիմութեան ճամբան: Ծօլառ անուն մըն որ մեր ահանջին շատ ախորժակի կը հնչէ եւ հին յուշերէ վերարձարծէ մեր մէջ: Ուրեմն կը գնահատեմ «Ծօլառ»ը հինգ տարի չնչին գումար մը կը նուիրեմ «Ծօլառ»ի յառաջդիմութեան եւ գորացման համար:

ՀԱՆ ԳՈՆՏՈՒՄ

Սանֆրանցիսկո, Քալիֆ.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ
ՋԷՅԹՈՒՆԻ ՆԱԽԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ շԵՏ

Անցեալ տարի բերկառիթ պատահութիւնն ունեցալ ինքնակշիռ մէջ տեսնուելու Գոնուդի քաջածանօթ վանա-
շայր՝ Գեր. Բարթոլէմէոս Վարդապետին հետ: Ասիկա
երկրորդ տեսակցութիւնն էր այդ պատահական եկեղեցա-
կանին հետ: Առաջին անգամ զինք տեսած էր ութը տարի
առաջ Իսրաէլի մէջ, Կիրիկիոյ Երանաւէտ եւ Երազարից օ-
րերուն...:

Առաջին տեսակցութեանն աշխոյժ էր ան եւ խանդա-
վառ, իսկ վերջին անգամ ընկճուած ու անմխիթար երե-
ւոյթ մը կը պարզէր: Կարելի չէր առանց արցունքի լսել այս
նոր առիւծին խոսք հառաչանքը, երբ կ'անդրադառնար հին
օրերուն, հին փառքերուն, Ջէյթունի մղած անհաւատար կը-
րիւններուն եւ շահած բազմաթիւ յաղթութեանց, մասնա-
ւորապէս թուրք զօրանոցի գրաւման եւ թուրք զինուորնե-
րու եւ սպաներու իր խաչին եւ Աւետարանին տակէն անցու-
ցած ըլլալու պարտականութիւն: Երբ իմացաւ իմ Չնդուչի
ըլլալ, պահ մը ակնապիշ աչքերուս մէջ նախշաւ, կարծես
նոզեցանց եւ արիւննոտ յիշատակներ արթնցնելու մտադ-
րութեամբ. ապա համակ թախիծով ու զաւեռացած զգացու-
մով դռնէն.— Չնդուչ, ինչո՞ւ Չնդուչ: Ան ալ գոհն է իր
ներստական ու գիտադրական կեցութեամբին:

Կարմիր յիշատակներ կ'արթննան մտքիս մէջ, յուզ-
ուած՝ սրտի անհուն մարմնով մը կը հարցնեմ թէ ուրի՞շ
իմացած է Չնդուչ մասին:

Ահա իրականութեան մը արիւննոտ պատկերը վերյիշել
բաւական քաջութիւն կը պահանջէ եւ ես կը նկատեմ որ
անբասիր եկեղեցականին քով կը պակսի այդ քաջութիւնը:
Իմ կրկնով թախանձանքիս իբր գոհացում՝ կ'սկսի պատմել
ցած ձայնով մը:

— Շատ մօտէն տեղեակ եմ Չնդուչի: Ջէյթունի անկու-
մէն վերջ մեկ վերապրողներս տարապրեցին Ջերմուկ, որ,
ինչպէս զիտէք, Չնդուչին հինգ ժամ միայն հեռու է եւ ուր
ամէն օր Չնդուչիներ կուգային: Ախա արժանաւատ
անձերէ լսելի Չնդուչ հայերուն վիճակուած ահաւոր ար-
հաւիրքն ու սպանդը: Լսելի նաեւ Չնդուչիներու քաջա-
գործութիւնները, անոնց արեւական մահը, նոյն իսկ կրնե-
րուն եւ աղջիկներուն հերոսական կռիւները ընդդէմ թուր-
քին եւ քուրտին՝ անոնց ձեռքը չիցնալու եւ պատուաւոր
մահ մը ունենալու համար:

Չարաշուք իրականութեան դաժան ու ահաբեկ պատ-
կերը տառապանքով սիրտս անհուն յուզումով եւ դայրոյ-
թով կը լեցնէ ու այդ հոգեմաշ վիճակով ձեռքերս ճակտին
կը մնամ երկար եւ ապա լուսնի տակ խոսքով կը հարցնեմ թէ
այդ մնացողներ ալ կը գտնուին զեռ Չնդուչի մէջ:

— Այո, կը պատասխանէ, կան սակաւաթիւ կիներ եւ
աղջիկներ ու փոքր տղաքներ ալ. կ'ըսուի թէ բաւական
փոքրիկներ կը գտնուին քիւրտերու մօտ, որոնք արդէն իսկ
ձուլուած են քիւրտներու մէջ եւ անճանաչելի դարձած են:
Կայ նաեւ Չնդուչի բնաւոր մը Ջերմուկի մէջ: Ունիմ
ուրիշ հետաքրքրաշարժ պատմութիւն մը, որ վստահ եմ
թէ ձեզ եւ ձեր բոլոր հայրենակիցները պիտի հետաքրքրէ
մեծապէս:

1922-ի ձմեռը (ինչպէս գիտէք այդ կողմերու ձմեռը
խիստ կ'ըլլայ) եւ լուսնապարտաւ շրջալուծ հիւանդա-
ցած էր եւ բաւական տկարացած, այնպէս որ ալ վերջին օ-
րերս կը համարուէին թէ ինծի եւ թէ զիս զիտողներուն հա-
մար: Այն ալ անիծեալ օրերը կեանքիս վերջը նկատելով
սկսած էի այդ ուղղութեամբ՝ պատրաստուիլ: Իբր դրամ

կէս օսմանեան սակինոց մը ունէի եւ այդ ալ խնամով պա-
հած էի իմ յուզարկաւորութեան համար. ճիշտ այդ օրե-
րուն Չնդուչ կոչակարութեան համար գացած Ջէյթունցի
հայ մը հոնի վերադառնալով հետը բերած էր ձեռագործ
Սուրբ Գիրք մը: Քովս կանչել տուի այդ Ջէյթունցին եւ
փափաք յայտնեցի տեսնել Չնդուչին բերած Սուրբ Գիրքը:
Ուշի ուշով քննեցի դայն եւ բաւական հին ու թանկագին
գտնելով հետաքրքրուեցայ զիտնալ թէ ինչպէս ձեռք ձեռք
է: Կը պատմէ որ թուրքին մէկը օր մը իրեն քով գալով կը
յայտնէ թէ հայերէն զիւրք մը ունի որ կ'ուղէ ծախել: Մար-
դը փոխաբէն կոչիկ մը կարած եւ ձեռք ձեռք է Սուրբ
Գիրքը: Ասիկա իմանալով իմ յուզարկաւորութեան համար
պահած կէս օսմանեան սակին տուի եւ զինքի ձեռագործ
Սուրբ Գիրքը:

— Ո՞ր կը մնայ այդ Սուրբ Գիրքը, ձեր քովն է եւ
կարելի չէ՞ տեսնել, կը հարցնեմ:

— Ոչ, կը պատասխանէ, իմ քով չէ, այլ Երուսաղէմ կը
մնայ: Քանիցս մտադրեցի Սր. Յակոբայ գրադարանին
տալ, քանի որ իրենք հինգ անգլիական սակի գնահատած էին
անոր գինը, սակայն չկրցայ ծախել՝ անոր համար որ ան-
մոտաց յիշատակներ ունի այդ Սուրբ Գիրքը ինձ համար,
թէ՛ հայ աւանի մը միակ մասունքը կը նկատուի եւ թէ դայն
ունենալէս անմիջապէս յետոյ ապաքինեցայ հիւանդութե-
նէս: Եթէ տալու ըլլամ՝ Չնդուչ Հայրենակցական Միու-
թեան կուտամ եւ անոր փոխարէն քով ապաղլութեան կու-
տամ իմ յիշատակներս:

Պէյրուք

ՆԵՐՎԱՐԴ

ՉՆԴՈՒՇՅՈՒՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՆ

ՍԷԼՄԱ.— Մարտ 22ին Տիկին Մարգրիտ Կ. Յակոբեան Ֆրէզնոյի
Պրէմէր հիւանդանոցին մէջ կուրագիի յաջող գործողութենէ մը յետոյ
իր բնակարանը վերադարձաւ: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք Պրն.
Կ. Յակոբեանի եւ բոլոր ազգականներուն:

*** Մայիս 18ին նոյնպէս կուրագեաց գործողութեան ենթարկուե-
ցաւ Տիկ. Մարիամ Ս. Ս. Սրբմեան, Ալեքսանդր հիւանդանոցին մէջ:
Երեք շաբաթ հիւանդանոց մտալ յետոյ, առողջ վիճակի մէջ վերադառ-
նաւ իր բնակարանը: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք բոլոր Սրբմե-
աններու եւ բարեկամներու:

ՅԻՔԷՆՈ.— Յունիս Յին տեղի ունեցաւ Չնդուչ Վերջ. Միութեան
Ֆրէզնոյի մասնաճիւղին անդամական Ժողովը, Տէր եւ Տիկ. Թորոս Տո-
ղուդեանի բնակարանին մէջ՝ Տաշնուպ, 28 անդամներու ներկայու-
թեամբ: Նախ բոլոր անդամներն ալ իրենց տարեկանները (երեքական
տարբ.) վճարեցին եւ ամէնքն ալ փափաք յայտնեցին մասնաճիւղը ա-
ւելի եւս զօրացնել:

Կատարուեցաւ վարչական քննութիւն եւ նոր վարչութեան անդամ
քննարկեցան Մելքոն Փապուճեան, Կ. Ս. Սրբմեան, Ճան Նահապետ-
եան, Նիկոլոս Փապուճեան եւ Սաշիկ Ս. Սրբմեան: Մասնաճիւղիս
անդամներուն թիւը աւելցնելու համար յանձնախումբ մը քննարկեցաւ
Ժողովին կողմէ հետեւեալ անձերով: Պրն. Աւրան Ս. Սրբմեան, Ճան
Նահապետեան, Ս. Փիլոյեան եւ Ճան Աշտարակեան:

Նոյնպէս այս տարի դաշտահանուէր մը տալ որոշուեցաւ: Ասոր հա-
մար եւս յանձնախումբ մը քննարկեցաւ հետեւեալ անդամներով՝ Ասյան
Ս. Սրբմեան, Չաղօ Ս. Սրբմեան, Ս. Փիլոյեան, Ճան Աշտարակեան,
Յակոբ Պ. Սրբմեան, Սաշատուր Ս. Սրբմեան եւ Յակոբ Քէլլոյեան:
Յանձնախումբը խոստացած է իր լատիւններ բնել, քանք պիտի չիտայ
որպէս զի Ֆրէզնոյի շրջանի, Լոս Անճէլէսի եւ ՍանՖրանցիսկոյի բոլոր
հայրենակիցները բերել այս դաշտահանուէրին, որ Միութեան զօրաց-
ման քանակը պիտի կրկնապատկուին: Յաջողութիւն եւ կարգաւորութիւն կը
մտադրենք յանձնախումբին:

Չմոռնա՞մ ըսելու որ Տէր եւ Տիկին Տողուդեան ներկաները հիւրա-
սիրեցին ազգազգայնակալ եւ բէրավ: Մեր Հորհաւակութիւնը կը յայտ-
նենք: Կ. Ս. ՍԵՐՈՒՄԵԱՆ

ՄԱՐՍԷՅԷԼ.— Հայրենակցութիւն Օր. Մ. Չաղմանեան կատարեալ-
պէս ապաքինած ըլլալով իր հիւանդութենէն՝ սկսաւ շարունակել իր
գարացը: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Հայրենակից Տէր և Տիկին Մ. Մըլլիեանի փոքրիկը երկար առանձնի ի վեր հիւանդ է. չուտափոխյի տղաքինում կը մաղթենք:

*** Հայրենակից Պրն. Վարդան Վարդանեանի աչքին մէջ՝ դարձած պահուն՝ երկաթի կտոր մը գացած ըլլալով երկու շաբաթ տուն մնաց: Ուրախ ենք բնելու որ այժմ աչքը լաւացած է և սկսած է գործել:

*** Լօրէնսին Պրն. Ս. Յակոբեան ուզած էր «Մօլա»-ի միջոցաւ տեղեկութիւն ստանալ Մարիամ Գոգմազեանի մասին: Ըսեմ թէ Մարիամ Գոգմազեան ընտանեօր ուղղակի Չնկույն աղատած է: Թաղուհի թուի մանեանի աղջիկն է. հօրը անունը չեմ գիտեր: Գիտեմ սակայն որ կ. Թուի մանեանի մօրեղբորը կրնն է Տիկ. Թաղուհին և քոյրը Բրօֆ. Պուճիգանեանի, որ այժմ Ամերիկա է: Մայրը Թաղուհին երկու աղջիկներով Պէյրուէ կը մնայ: Երկու տղաքներն ալ՝ Մլքաթի և Աղապապ՝ Հարաւային Ամերիկա դացած են և իրենց քոյրը Մարիամ Գոգմազեանն է որ իրենց մօտ տարին վերջերս:

Պ. ՏԱՐԳՈՒՆԵԱՆ

ՇԻՔԱԿՕ.— Տէր և Տիկ. Յ. Ապրիլեանի փոքրիկը Մարտիրոս իր հարսանիքի հիւանդութենէն տղաքինում է: Մեր խնդակցութիւնը:

*** Տէր և Տիկ. Գ. Կէօքճեան, Պրն. Կ. Եօղսուեան և Պրն. Կարապետ Զինադորեան զէպի արեւելեան նահանգներ մեկնեցան Հայրենակիցներու այցելելու համար: Բարի ճանապարհ և յաջող վերադարձ կը մաղթենք:

*** Տիկ. Վ. Յ. Ազնաւուրեան և Տիկ. Ա. Տ. Զուլեան փրօվիտէն մեկնեցան իրենց տղաքաններուն այցելելու համար: Բարի ճանապարհ և յաջող դարձ կը մաղթենք:

*** Անճանօթ տղաքներ Քէօնայ Քեոնի վրայ յարձակած են՝ կողոպտելու համար, միայն 65 սէնթ կրցած են առնել: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք:

*** Տիկին Նուարդ Գ. Թէլլիսեան իր երկու զուակներով ամառուան արձակուրդի համար մեկնեցաւ Քլիվլենտ իր քրոջ քով: Բարի վայելում և վերադարձ կը մաղթենք:

ԼՐԱՏՈՒ

ԼՕՐԷՆՍ.— Յունիս 16-ի Կիրակին մեր պատուական հայրենակիցը Պրն. Մ. Գրիգորեան Մարտէլլէն քաղաք վերադարձաւ իր ազնիւ տիկինով հետ: Մեր շնորհաւորութիւնները յայտնելով կը մաղթենք երջանիկ և երկար տարիներ:

*** Նիւ Եօրքէն քաղաք մամանեցին Տէր և Տիկ. Յակոբ Զօնթօեան: Կը հիւրասիրտին իրենց կնքահօր Խաչիկ Հաղարվարդեանի մօտ: Բարի գալուստ կը մաղթենք:

*** Յունիս 9-ին, Կիրակի օր, Յակոբ փառնաճեան ունեցաւ ինքնուշարժի արկած մը, որու հետեանքով քանի մը օր անկողին մնաց: Այժմ ըստ բժշկական կազմուրումն է և սկսած է գործել: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք:

*** Պրն. Առաքել Ոսկերիչեան երկու շաբաթ անկողին մնալէ յետոյ, ներկայիս վերադարձած է իր առողջութիւնը: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Շիքալույի մեր հայրենակիցներէն Տէր և Տիկ. Գրիգոր Վընսօեան, Կարապետ Գըլճեան և Կարապետ Եօղսուեան քաղաք մամանեցին և տուն մը Տէր և Տիկին. Նիկողոս Կօկիչեանի տան մէջ հիւրասիրտելէ յետոյ վերադարձան Շիքալո: Բարի երթ կը մաղթենք:

*** Տէր և Տիկ. Պետրոս Ազնաւուրեանի փոքրիկը Տիւրուհի հիւանդանոցէն տուն բերուեցաւ բուական լաւացած վիճակի մէջ: Մեր խնդակցութիւնը յայտնելով կատարեալ ապաքինում կը մաղթենք:

*** Յունիս 9-ին Ռ. Ա. Կուսակցութեան դաշտահանդէսին մէջ առիթը ունեցաւ տեսնելու մեր հայրենակից Պրն. Պապասար Էլիշեանը՝ իր ընտանիքին և սրբազաններուն հետ: Ասիկա անակնկալ մըն էր մեզի համար: Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք և կը մաղթենք երջանիկ տարիներ:

Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԱԼԱՆՍ.— Մեր Լօրէնսուհի հայրենակիցներէն Պր. Մ. Գրիգորեանի քնք Եր. Մարգրիտ Գարակէօղեանի (Աւերակցի) ամուսնութիւնը տեղի ունեցաւ Մայիս 11-ին՝ Վալանսի մէջ, կնքահայրութեամբ Պր. Յ. Թալեանի և ձեռամբ Տէր Պոսկ քնք. Սարգիսեանի: Նորապսակները Թրանսա զանուած պահերուն այցելեցին նաեւ Մարտէլլ և Յունիս 2-ին Շէրպուրկէն նաև առին զէպի ի Նիւ Եօրքէ:

Կը շնորհաւորենք նորապսակ ամուր և երջանիկ կեանք կը մաղթենք: Աչքը լոյս Տէր և Տիկ. Խ. Հաղարվարդեանի և Պր. Յ. Գրիգորեանի:

*** Հայրենակից Պր. Պ. Թուրոյեանի մայրը և քոյրը ի մօտոյ Հալէպէն Թրանսա կ'ապաստին: Այս ձեռք բերուած յաջողութեան և նպատակի իրողութեան համար մեր խնդակցութիւնը կը յայտնենք Պր. Պ. Թուրոյեանի: Աչքը լոյս Տէր և Տիկ. Ա. Խալիլօսեանի, Տէր և Տիկ. Խ. Հաղարվարդեանի և Պր. Ա. Թուրոյեանի:

Գ. Թ.



ՓՈՔՐԻԿ ԽԱԶԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
(Ծնած Սեպտ. 18. 1928)

ՇԻՔԱԿՕ.— Տէր և Տիկ. Գ. Յովսէփեանի սրբուհի Խաչատուր մկրտութիւնը տեղի ունեցաւ Մայիս 25-ին, Շարաթ երեկոյ, իրենց բնակարանին մէջ: Մկրտութեան սուրբ խորհուրդը կատարեց զաղութիւն հովիւ Արթ. Տէր Վ. Քահանայ Կիրոսալեան՝ կնքահայրութեամբ Տէր և Տիկ. Յով. Բարդուղեանի:

Տէր Հայրը զեղեցիկ կերպով կատարեց մկրտութիւնը և խօսեցաւ սուրբ պատշաճի քանի մը խօսքեր. յետոյ հրաւրեալներ բաշխեց անգանին չուրջ ուրախանալու համար: Տէր և Տիկ. Յովսէփեան լաւ չէին խնայած ներկաները զոհացնելու համար:

Ներկաներուն կողմէ փոքրիկին բերուած նուէրները ցուցադրեցան, ծաղկափունջ մըն ալ զրկուած էր Մօլա Ընթ. Ընկերութեան կողմէ: Փոքրիկին ծնողքը յայտնեցին իրենց սրտազին շնորհակալութիւնը:

Ուրախութիւնը անցաւ շատ հաճելի և տեւեց մինչեւ ուշ առաւօտ: Ժամանակը յառաջացած ըլլալով ներկաներ փոքրիկին արեւատուութեան մաղթանքներ բնելով մեկնեցան՝ իրենց հետ տանելով այն լաւ տպաւորութիւնը որ ընտանեկան յարկէն միայն կը բախտէ:

ՆԵՐԿԱՏ ՍԼ

ՆԻԻ ԵՈՐԲ.— Տէր և Տիկին Գարիբէլ Մուրադեան աղջիկ զաւակ ունեցան: Մեր խնդակցութիւնը:

*** Մեր Լօրէնսի հայրենակիցներէն Պր. Մ. Գրիգորեան, որ Թրանսա դացած էր, ամուսնանալով հոս վերադարձաւ և կրկին Լօրէնս գնաց իր տիկնոջ հետ միասին: Մեր շնորհաւորութիւնները:

*** Մայիս 27-ին, Տէր և Տիկին Կարապետ ձգնուորեան իրենց հինգ տարեկան զաւակը՝ ձառնին սեւ հոգին յանձնեցին կորճատեւ հիւանդութենէ մը յետոյ: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Տէր և Տիկին ձգնուորեանի:

ԼՐԱՏՈՒ

ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻՔ

ՍԷԼՄԱ.— Խորին շնորհակալութիւն կը յայտնենք մեր բոլոր տղաքաններուն, բարեկամներուն և հայրենակիցներուն, որոնք ծաղկափունջերով այցելեցին մեզի՝ մեր հիւանդանոց պտուած պահուն:

Տէր ԵՒ ՏԻԿԻՆ Կ. ՅԱԿՈԲԵԱՆ

*** Խորին շնորհակալութիւն կը յայտնենք այն բոլոր հայրենակիցներուն և ազգականներուն, որոնք մեզ միխթարելու և ուրախացնելու համար ծաղկափունջերով այցելեցին մեզի՝ մեր հիւանդանոց գտնուած պահուն:

Տէր ԵՒ ՏԻԿԻՆ Խ. Ս. ՍԱՐԳԵԱՆ

ՅՐԷԶՆՈՅԻ ՄԱՍՆԱՃԻԴԻՆ ԴԱՇՏԱՆԱՆԴԵԱՆ.— Ի զիտութեամբ Յրէզնոյի, Լոս Անճելըսի և Սանթրահիսի բոլոր ջանքերով կը յայտարարենք թէ մասնաճիւղիս դաշտահանդէսը տեղի պիտի ունայ Յունիս 28-ին, անցեալ տարուան տեղը՝ Փիտտոս: Թանձախոսութիւնը չի խնայած այս դաշտահանդէսը թէ փառաւոր բնիւ և թէ Սիւնի կեան հօգուցման ծառայեցնելու համար:

ԵԱՆԶԵԱՆԻՍ